

յարերեւուն համար յօգուտս Եղիշէ Առաքելոյ վանքի Դիս աւանի թ. 305:

Օրհնութեան Կոնդակ շնորհուեցաւ Նիկողայոս Բ. Երկայնարազուէ Արղութեանցին Սանահնի վանուց վերանորոգութեան համար, որ նորանախնեաց յատուէ սրբավայրն է և դամբարանը. թ. 306:

Օրհնութեան և զօհունակութեան կոնդակ շնորհուեցաւ Տփլիսաբնակ պ. Կարապետ Յարութիւնեան Եազածեանցին, նորա աշխատանաց փոխարէն, որ սովորեցրեց երկու գողթական հայ աշակերաների իւր արհեստը. թ. 307:



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՏԷՐ ԻՄ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԻՄ

Յովն. Ի 24:

Թ

ՈՎՐԱՍ առաքեալը չէր կամենում Փրկչի յարութեանը հաւատալ, մինչեւ Նորա ձեռքերի վերայ բեւեռների նըշանը չտեսներ և Նորա խոցուած կողը չշօշափէր: այստեղից սովորութիւն է մնացել կասկածոսներին և թերահաւաններին «Թովմաս» անուանել, և մենք երբ թեթեամտաբար՝ չենք կարող հաւատալ, ասում ենք, կարծում ենք թէ առաքեալի օրինակին ենք հետեւում՝ մոռանալով, որ նոյն այդ Թովմաս առաքեալի կուրծքից դուրս թաւա առաջին անգամ ամենազօրեղ հաւատոյ բացականչութիւնը՝ «Տէր իմ և Աստուած իմ»։—Մեր դարը երկրայութեան և հետախուզութեան դար է, գիտութեան մէջ զրաւան ուղղութիւնն է իշխում և առհասարակ մարդիկ ձգտում են ամէն ինչ փորձելով ապացուցանել՝ տեսնել ու շօշափել, որ ապա իբրեւ իրողութիւն ընդունեն: Թէպէտ հաւատոյ առաքան չափի ու ձեւի տակ չի մտնում, բայց Թովմաս

առաքեալի օրինակը ցոյց է տալիս, որ նորա նման կշռադատող մարդիկ ևս հաւատոյ ճանապարհի վերայ ելնել կարող են ի վերջոյ, ուստի և նա թող ուղեցոյց լինի ներկայ սերունդին այդ ճանապարհը դանդաղ:

Հաւատալ նոյն չափով զիւրին չէ այս և այն մարդու համար. կան թեթեամիտ մարդիկ, որոնք ամէն լսածի հաւատում են, և այդ հաւատը ոչինչ փոփոխութիւն յառաջ չի բերում նոցա հօգու և սրտի մէջ. այդպիսիների նկատմամբ Յովհաննէս աւետարանիչն ասում է՝ «Ինքն Յիսուս ոչ հաւատար զանձն նոցա... զի ինքն իսկ զիտէր զինչ կրէր ի մարդն»։ Կան նաեւ միամիտ մարդիկ, որոնց մանկական հօգու ինչպէս մի պայծառ հայելու մէջ՝ ճշմարիտ հաւատը շող է տալիս իսկոյն և ճառագայթներ արձակում, լուսաւորում ամբողջ տունը. այդպիսիների հաւատը Բրիստոս շատ բարձր էր գնահատում և իւր հետեւողներից պահանջում էր աղանու միամտութիւն ունենալ կամ մանկան հօգի, որպէս զի ճշմարտութեան լոյսը առանց արգելքի նոցա սրտերը թափանցէ: Սակայն մի երրորդ կարգի մարդիկ ևս կան, որոնց համար հաւատալ նոյն է թէ ամբողջ ներքին աշխարհը տակն ու վրայ անել, մինչեւ այժմ՝ ունեցած բոլոր համոզմունքները, զգացումներն ու իղձերը զօհ բերել Աստուծոյ սեղանի վերայ և բոլորովին նոր կեանք սկսել. իսկ այդ զօհաբերութիւնը հեշտութեամբ առանց երկարատեւ ու յամառ ներքին կռուի չի լինում, և ով այդ կռուի միջից յաղթող է ելնում՝ նա այլեւ ոչ միայն սոսկ հաւատացող է, այլ հաւատոյ հերոս, ինչպիսին էր օրինակ Պօղոս առաքեալը, ինչպիսին անշուշտ էր նաեւ Թովմաս:

Եթէ սա անհրաժեշտ էր համարում Տիրոջ վիրաւոր ձեռներն ու կողը շօշափել, որպէս զի Նորա յարութեանը հաւատալ կարողանայ՝ իւր զօրաւոր պատճառն ունէր այդ պէտք է մէկ մտածել՝ ինչ ասել է պարզ աչքով տեսնել ճանաչաճող մարդուն խաչի վերայ դաժնեւած, հօգին աւանդելիս՝ տեսնել և խորտակուած սրտով տուն վերադառնալ, ամէն տկնկալութիւն, ամէն յոյս Խորայէլի Ժողովրդի և սեփական անձի փրկութեան

համար ոչնչացած համարել, և յանկարծ հաւատաւ թէ ոչնչացած բան չկայ թէ կենդանի է դեռ Սա որի կողը խոցելիս բոլոր Սորա հետեւողների սիրան էին ծակել և սպանել ըստ երեւոյթին դէպի Սա տաճած հաւատը: Կենդանի է—ինչ չէր տայ Թովմաս: համոզուելու համար թէ ճշմարիտ է այդ և երբ յարուցեալ Փրկիչը նորա առջ ելաւ և հրաւիրեց իւր ձեռներն ու կողը շօշափել և շլիննել անհաւատ: այլ հաւատացեալ:» նա չշտապեց հարկաւ այդ հրաւերին հետեւլու: շօշափելու այլեւ կարիք չէր զգում նա: մի ահագին ծանրութիւն ընկած էր էր նորա սրտի վերայից: անհարկինը հնարաւոր էր դարձել մահը կեանքի էր փոխուել—և ո՞վ կարող էր այդ ամէնը զուլս բերել: և թէ ո՞չ նոյն ինքն Ամենակարողն Աստուած: Ամէն տարակոյս այստեղ արդէն փարատուած էր և լուսափայլ երանաւտ հաւատը հոգու ամենամութ խորշերն էր թափանցում:

«Տէր իմ և Աստուած իմ, ինչպիսի ահաւոր խօսք էր այդ ինչպիսի յանգուգն խոստովանութիւն: հեշտ էր Աստուած անուանել մի անձի որի հետ երկար ժամանակ նստել ելիր ևս մարդկային տիրութեան շատ և շատ նշաններ տեսել վերան: Թովմաս առաքելային այդպէս խոստովանել ստիպողը միայն իւր աչքի տեսածը չէր անշուշտ: Երբ փրկիչը հակառակ իւր դէմ եղած բոլոր սպառնալիքներին՝ պատրաստուում էր հրէստան գնալ: նոյն Թովման էր որ ասաց. «Օ՛ր և կայք և մեք: զի ընդ Սմա մեռցուք:» և դատարկ պարծենկոտութիւն չէր այդ: դուցէ առաջին շաբթի մէջ կառուողներից մէկը կլինէր նա: և թէ իւր Տէրը Դաւթի Որդուն վայել փառօք հանդէս գար և պատերազմ բանար թշնամիների դէմ: բայց իրերն այնպիսի ընթացք ստացան: Սորա աչքի առաջ այնպիսի բաներ կատարուեցան որոնց մարդկային խելքը հասնել չէր կարող: և ո՞վ գիտէ այդ բոլոր ժամանակ ինչպիսի փոթորիկ էր յուզում Սորա հոգին: քանի՜ անգամ հարցրել էր նա ինքն իրեն՝ ինչպէս եղաւ ինչպէս թոյլ տուաւ Աստուած: որ արդարը մասնաւոր ինչպէս այն Տէրը որի մօտ բանա

կենաց յաւիտենականաց՝ գտել էին: այնչափ նշաններ ու արուեստներ տեսել և հաւատացել թէ Սա է ճշմարիտ Որդին Աստուծոյ՝ ինչպէս մեռաւ խաչի անարգական մահով և գերեզման դրուեցաւ: այլ ևս ո՞վ կարող է ապրել: և թէ Սա մեռաւ—և արժէ՞ մի թէ ապրել: Երբութեան աւետիան այդ բոլոր հարցերի պատասխանը տալիս էր: սակայն մնայլ անցեալի տպաւորութիւնն այնչափ թարմ էր դեռ: աչքով տեսածն ու ականջով լսածը այնպիսի զօրեղ նախապաշարմունք էին դարձել: որ համապատասխան զօրութիւն ունեցող մի տպաւորութիւն պէտք էր այդ մնայլը փարատելու և կենդանի հաւատ ներշնչելու համար:—տեսնել մի անգամ Երբութեան:

Ս. բաւական է որ մենք ևս մի անգամ հոգեւոր աչքով տեսնենք Երբութեան: որպէս զի նաեւ մեր մէջ ճառագայթէ այն պայծառ զիտակցութիւնը: թէ մեր Տէրն ու մեր Աստուածն է պատկերանում մեր առաջ յանձին Սորա: Թէպէտ Սա ինքը երանի էր տալիս այնպիսիներին: «որոց ոչ իցէ տեսալ և հաւատացնէ:» բայց ժամանակակից զիտութեան պտուղները ճաշակողների համար շատ դժուար է այլեւ այդ երանութեանն արժանաւոր Մենք Թովմասի պէս մինչև չտեսնենք ու չշօշափենք՝ չենք կարող հաւատաւ և դատապարտելի չէ ամենեւին: և թէ յիշատի Սորա պէս ըզմանք ու հետամուտ լինինք տեսնելու: Ներկայ սերունդի մէջ անհաւատութիւն անուցանողը ոչ թէ գիտական հետազոտութեան միջոցաւ ձեռք բերած ծանօթութիւններն են: այլ այն նախապաշարմունք: թէ մենք արդէն շատ բան՝ ամէն բան գիտենք: և ինչ որ մեր ծանօթութեան սահմաններից դուրս է՝ իրողութիւն չէ: Այս նախապաշարմունք արդելում է մեզ ներքին կեանքին վերաբերեալ այնպիսի խնդիրներով զբաղուել: որոնց լուծու մը աւելի կարեւոր է մեզ համար: քան ամբողջ աշխարհի իմաստութիւնը: արգելում է ճշմարիտ հաւատ ունենալ առ Քրիստոս: որով բացատրում էին մեր հոգեւոր կեանքի զաղանկները: Զենք կարող զխաւրտութեան այն պատճառաւ: որ կարիք չենք զգում: անպատուութիւն ենք համարում կարծես հե-

տամուտ լինել տեսնելու և ծանաչելու Նորան։
Թովմասի պէս Թերաշաւտները հե-
տամուտ կլինէին և որպէս զի յարու-
թեան փառքի մէջ Նորան տեսնեն և Տէր
ու Աստուած խոստովանեն պէտք է նախ
ստրկական խոնարհ վիճակի մէջ տեսած
լինին. պէտք է քայլ առ քայլ հետեւեն
Նորա երկրաւոր կեանքին, այնպէս խորա-
սուզուին հոգեով այս հրաշալի կեանքի ման-
րամանութեանց մէջ, որ հեղ և խոնարհ
Մարդոյ Որդւոյ պատկերը իւր ամբիժ մաք-
րութեամբ նկարուի նոցա ներքին տեսու-
թեան առաջ և համոզուին թէ ոչինչ չկայ
այս պայծառ պատկերի մէջ նիւթական ան-
ցաւոր աշխարհին պատկանող, թէ յիշուի՝
ինչպէս սիրելի աշակերտն է ասում, մարդ-
կային աչքը արժանանում է այստեղ Աս-
տուած մարմնացած տեսնելու և մարդկային
ձեռքը՝ «շօշախել ի վերայ Բանին կենաց»
Այդպիսի համոզում ունենալուց յետոյ խա-
չի վերայ դամուած Աստուծոյ Որդին իբրեւ
տարօրինակ առեղծուած չի ներկայանայ մեզ
այլ ևս այլ իբրեւ աստուածային բոլոր խոր-
հուրդները բացատրող ամենափնւմ մի խոր-
հուրդ. մեզ ոչ միայն անհնարին չի թուի
ընդունել թէ Նա յարութիւն է առել մա-
հաւան զրկից, այլ և ստիպուած կզաննէք
մեզ վկայել ու Պետրոս առաքեալի հետ թէ
«ոչ էր հնար ըմբռնել Նմա ի մահուանէ»
ամենայն երկիւղածութեամբ ու երախտադի-
տութեամբ ծունկ կխոնարհենք Նորա ա-
ռաջ և Տէր ու Աստուած կխոստովանենք
այն վեհ խորհրդով, որ Առաքեալն է պահան-
ջում. «Ձայն խորհրդի իւրաքանչիւր որ ի
ձեռք, որ և ի Բրիստոս Յիսուս, որ ի կերպա-
րանս Աստուծոյ է՝ ոչինչ յափշտակութիւն
համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ
զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի
առեալ, ի նմանութիւն մարդկանց եղեալ
և կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ, խոնար-
հեցոյց զանձն լեալ հնազանդ մահու չափ
և մահու խաչի վրան որպէս և Աստուած զՆա
առաւել բարձրացոյց և շնորհեաց նմա անուն»

որ ի վեր է քան զամենայն անուն. զի յա-
նուն Յիսուսի Բրիստոսի ամենայն ծունկ
կրկնեացի, երկ'աւորաց և երկրաւորաց և
սանդարամետականաց, և ամենայն լեզու խոս-
տովան լիցի, թէ Տէր է Յիսուս Բրիստոս՝ ի
փառս Աստուծոյ Հօր»։ ***



ՅՈՒՆԵԿԱՆ ՎԵՆԵԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

(Նարոնակութիւն) *

Վանականութեան և նրան շրջապատող ժո-
ղովորդի մէջ եղած յարաբերութիւնը ամեն աեղ
հիմք գործաւ առաքելութեան (Mission) զարգաց-
ման, Քրիստոնէութիւնը ինչպէս արեւելքում, նոյն-
պէս և արեւմուտքում՝ առաջ զլիաւորապէս քա-
ղաքներում արմատացաւ, և պետական յունական
եկեղեցին, քրիստոնէութեան յաղթանակից յե-
տոյ, շատ քիչ եռանդ ցոյց տուեց նրա ազդեցու-
թիւնը աւելի հեռաւոր շրջաններում տարածելու.
Քորնպիսկոպոսները, որոնց աթոռատեղիները զիւ-
ղական ժողովորդի քրիստոնէացման համար կենտ-
րոնատեղիներ պիտի լինէին, շատ կանուխ զրկուե-
ցին իրենց կոչումից. դէպի այս նպատակը առա-
ջին քայլ արուեցաւ արդէն Անկիւրիոյ ժողովում,
314-ին, Դորա փոխարէն անապատում քաշուած
վանական զաղթականութիւնները կամ վանքերը,

*** Փիլիպ. Բ. 5—11. Այս նշանաւոր խոս-
քերի միտքը ազատ կերպով թարգմանած, հետեւե-
ալն է. «Ձեր մէջ իշխող սկզբունքը թող այն լի-
նի, ինչ որ էր Յիսուս Քրիստոսի մէջ. որ թէպէտ
Աստուծոյ կերպարանք ուներ՝ Աստուծոյ հաւասար
լինելը մի աւար շհամարեց (որ պինդ պահել
պէտք էր և ձեռքից չթողնել), այլ ինքն իրեն
զրկեց՝ ստրուկի կերպարանք առնելով, մարդու նը-
մանութիւն ստանալով և իբրեւ մարդ ներկայանա-
լով (որով) խոնարհեցրեց իրեն և եղաւ այնչափ
հնազանդ, որ մահ յանձն առաւ, այն ևս խաչի
մահ, Աւստի և Աստուած նորան խիստ բարձրացրեց
և շնորհեց նորան այն անունը, որ ամեն անունից
բարձր է, որպէս զի Յիսուսի անուամբ ամէն ծունկ
խոնարհի թէ երկնաւորների, թէ երկրաւորների և
թէ ստորերկրայինների և ամեն լեզու խոստո-
վանէ, թէ Յիսուս Քրիստոսը Տէր է, ի փառս Հայր
Աստուծոյ»:

* Ա. Յովհ. Ա. 1. Յովհ. Ա. 14.

** Գործք Բ. 24.

* Տէս «Արարատ» 1899 թ. համար 4 և 7 եր. 106